

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

Լեռնոնտրոլի համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 26-ի նիստի.

գ. Լեռնոնտրոլ

Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտին, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյովը, Վասիլի Կորոլյովը; Անտառաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ռաֆիկ Խառատյանը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N 05/՝

1. ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

զեկ. Է.Չախալյան

2. ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Է.Չախալյան

3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Հարությունյան

4. ՀՀ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Հարությունյան

5. ՀՀ ԼՄ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 02-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Հարությունյան

6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Գալուստյան

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ա.Գալուստյան

8. ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՍԱԼԱՐԿՄԱՄԲ” ԵՎ “ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ” ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ռ.Խեչումյան

9. “ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ” ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Մ.Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի կատարման և Տարեկան աշխատանքային պլանի կատարման մասին նախագիծը

-Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Էդիկ Չախալյանը, որը ներկայացրեց 2024 թ-ին կատարված աշխատանքները, ձեռքբերումները, բյուջեի կատարման արդյունքները; ներկայացրեց սուբվենցիոն ծրագրով կատարված փողոցի վերանորոգման և Անտառաշեն բնակավայրի գազաֆիկացման աշխատանքները: Է.Չախալյանը ներկայացրեց նաև Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված գործառույթները: Ավագանու անդամները արտահայտեցին իրենց կարիքները և հավանություն տվեցին համայնքի ղեկավարի ելույթին

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N 06/

2. **ԼՍԵՑԻՆ** - Լերմոնտովո համայնքի 2025 թ-ի Տարեկան Աշխատանքային պլանը հաստատելու մասին նախագիծը

- Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Էդիկ Չախալյանը: Նա ներկայացրեց 2025 թ-ի համար կազմված տարեկան աշխատանքային պլանը՝ նախատեսվող աշխատանքները և նրանց կատարման համար հատկացվող գումարները:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N07/

3. **ԼՍԵՑԻՆ** - Համայնում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը: Նա ներկայացրեց հանրային հավաքների վերաբերյալ իրազեկումների գրանցամատյանի վարման կարգի և ձևի մասին անհրաժեշտությունը, ինչին ավագանու անդամները տվեցին իրենց հավանությունը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N08/

4. **ԼՍԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովո համայնքի ավագանու Կանոնակարգը ընդունելու մասին նախագիծը

- գեկուցեց աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը: Նա բացատրեց, որ օրենքի փոփոխության հետ կապված ընդունում ենք ավագանու նոր Կանոնակարգ՝ ծանոթանալով Կանոնակարգին ավագանու անդամները տվեցին իրենց համաձայնությունը::

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N09-Ա/

5. **ԼՍԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովո համայնքի ավագանու 30.11.2021 թ-ի "ՀՀ ԼՄ Լերմոնտովո համայնքի ավագանու Կանոնակարգը ընդունելու մասին" թիվ 02-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին նախագիծը

- գեկուցեց աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը: Քանի որ հաստատվեց նոր Կանոնակարգը, 30.11.2021 թ-ին ընդունվածը պետք է համարել ուժը կորցրած:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N10-Ն/

6. **ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը:

Նա ներկայացրեց հողամասը, որը վարձակալությամբ պետք է տրամադրվի 25 տարի ժամկետով: Սահմանվեց մեկնարկային գինը, մասնակցության վճարը: Համայնքի ղեկավարին առաջարկվեց ապահովել համապատասխան գործընթացը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N11/

7. **ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդ վաճառքով օտարելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Արտյոմ Գալուստյանը: Նա ներկայացրեց հողամասը, որը ներկայացված է օտարման: Սահմանվեց

մեկնարկային գինը, մասնակցության վճարը: Համայնքի ղեկավարին առաջարկվեց ապահովել համապատասխան գործընթացը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N12/

8. ԼՍԵՑԻՆ - "Լերմոնտովո համայնքի 1-ին փողոցի մասնակի կառուցում սալարկմամբ" և "Լերմոնտովո համայնքի ջրագծի վերանորոգում վերակառուցում" սուբվենցիոն հայտերին հավանություն տալու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ Ռոզա Խեչումյանը: Նա տրամադրեց ավագանու անդամներին սուբվենցիոն հայտերը, որտեղ մանրամասն ներկայացված են կատարվելիք աշխատանքները, պահանջվող ծախսերը: Ավագանիները միաձայն համաձայնվեցին, նշելով որ սուբվենցիոն ծրագրերի արդյունքում կատարվում են համայնքին անհրաժեշտ աշխատանքներ:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N13/

9. ԼՍԵՑԻՆ - "Հայաստանի համայնքների միություն" իրավաբանական անձանց միությանը անդամակցելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ աշխատակազմի քարտուղար Անահիտ Հարությունյանը: Նա տեղեկացրեց ավագանու անդամներին այն մասին, որ Լերմոնտովո համայնքը հանդիսանում է "Հայաստանի համայնքների միություն" իրավաբանական անձանց միության անդամ և, որպես անդամավճար վճարում է տարեկան համապատասխան գումար:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N14/



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

[Handwritten signature]

ԷԴԻԿ ԶԱԽԱԼՅԱՆ

1. ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ *[Handwritten signature]*

2. ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ *[Handwritten signature]*

3. ԽԱՂԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ *[Handwritten signature]*

4. ԿՈՐՈՆՅՈՎ ԱՆԴՐԵՅ *[Handwritten signature]*

5. ԿՈՐՈՆՅՈՎ ՎԱՍԻԼԻ *[Handwritten signature]*